

ՄԵՌԺԻՍ.ՊԱՇՏՈՒԹԻՒՆՆԵՐԸ ԵՒ ՀԱԽԱՑԱՎԵՔՆԵՐԸ ԳԵՐԴԱՌՄ

Գեւզերում, գուցէ նաև քաղաքներում, հասարակ ժողովը դիմութիւն ունի սնոտիապաշտութիւնների և հաւատալիքների մի ամբողջ շարք, որոնք լեռաբերում են գլխաւորապէս մարդկային կեանքի գլխաւոր մամենաներին՝ ծննդեանը, պատկին և մահուանը. իսկ երկրորդ արար արարունակում են իրենց մէջ զուտ կենցագական, բժշկական—առաղջապահական և անտեսական իւրատեսակ բեցեպտներ։ Այդ հաւատալիքները բանում են մաքուր կրօնի և զիտնական բժշկութեան տեղը և խոլոտէս արմատացած լինելով ժողովրդի մէջ՝ խանդարում են նրա հոգեպէս և մարմնով բժշկուելուն։

Ինձ յաջոցուեց առ այժմ հաւաքել այդ սնոտիապաշտութիւնների և հաւատալիքների մի մասը միայն, որովհետեւ ժողովը դիմութիւնը չէ, որ ամբարում է նրանց, այլ նրանք կապւում են կեանքի տռամսձին զէպքիրի հետ և զալիս են լուծելու այս կամ այն գժուաբութիւնը։ Կոհ նրանց ամբողջութիւնը և մի ամփոփելը դժուար աշխատութիւն է, կարօտ շատերի ոգնութեան, պահանջում է երկար ժամանակ, լորուած ու շաղը ութիւն։ Մանաւանդ որ իւրաքանչիւր գուտառ կամ դիզ ինչպէս լեզուով, զգեստի տարապով, կրօնական և ազգային աշանգութիւններով այնպէս էլ սնոտիապաշտութիւններով ու հաւատալիքներով զանազանուում է միուններից։

Սնոտիապաշտութիւնները և հաւատալիքները լոյս աշխարհ հանելը բացի այն, որ կարող է ամենալաւ կերպով ընսրուշել հասարակ ժողովրդի հոգեկան կող ել—նրա ձգտումները, ոպառելիքները, նրա կրօնական բմբանողութեան չափը, ոպառելիքներին հասնելու համար գործ գրուած միջոցները, անհրաժեշտ է նաև զուտ եկեղեցու տեսակէտից։ Եկեղեցու վարչութիւնը պէտք է ամենայն մանրամասնութեամբ ճանաչի ժողովրդի հոգու մէջ բուն դրած մոլորութիւնները, որոնք համարեա թէ հասարակ ժողովրդի կրօնան են կազմում, և Եթէ ցանկութիւն ունի ճշմարիտ կրօնական զգացումներ ներչնչել նրան, պէտք է աստիճանաբար աւելի օգտակարը և ճշմարիտ աւլով՝ զուրու մզի ժողովրդի հոգուց եղած մոլորութիւնները։

Սնոտիապաշտութիւնները և հաւատալիքները գատակարգելու համար ես յարմար համարեցի գասաւորել նրանց զուգընթաց մարդկային հասակի զարգացման հետ։ Հաւատալիքներից մի քանիոր վերաբերում են այն ժամանակամիջոցնն, երբ

կինը յղիացած է և գլխաւորապէս ժառայում են արգանդի երեխայի սեռը որոշելուն; Այսպէս—

1. Եթէ յզի կնոջ մազերը սկսում են թափել, այդ կնշանակի նա տղայ կը երի. իսկ եթէ խտանում և երկարում են— աղջիկ:

2. Եթէ յզի կնոջը կանչում են կամ նա կամենում է մի տեղ բարձրանալ և անդիտակցաբար տռաջ աջ ոտն է գցում, կը նշանակի տղայ է բերելու • իսկ եթէ ձախը—աղջիկ:

3. Դիցուք կամենում են իմանալ այս կամ այն յզի կինը ինչ կը երի, զբա համար խաշ գնելով այծի գլուխը դցում են եռացող ջրի մէջ, յզի կնոջ անունը տալիս և ասում են. «Եթէ տղայ կը բերի ոռոկուլ (մաքրւած) դուրս արի»: Եթէ մաքրւած է գուրս գալիս—ուրեմն բերածը տղայ կլինի. Եթէ ոչ—աղջիկ:

4. Եթէ կինը յղութեան ժամանակ հաւի վիզ ուտի, նրա բերած երեխայի վիզը երկար կը լինի և ամսուր. սովորական երեխաների նման չի թուլանալ այս ու այն կողմը:

5. Եթէ կինը յղութեան ժամանակ անմիջապէս կժի բերանից ջուր խմի, նրա բերած երեխայի բերանից ջուր կը գնայ:

6. Եթէ կինը յղութեան ժամանակ գեղեցկանումէ՝ տղայ կը բերի, եթէ ընդհակառակը՝ աղջիկ:

7. Եթէ յղութեան ժամանակ կինը ժամոն (մսստաբ) շատ ծամի, նրա բերած երեխան «Ճմրկտան» կը լինի. այսինքն շատ կը կոտրտափ իրեն, այն երեսյթը, որ փոքր երեխան երին յաճախ լինում է: Սորա առաջն առնելու համար այդպիսի երեխայի օրօրցցից կտառում են «Ճմրուկ» (Խեցեմորթիկ մի աեստիլ): Զանագանում են «արու» և «էպ» ծմրուկ, առաջինը աղջկայ համար լաւ է, երկրորդը՝ տղայի:

Սրանից յետոյ մի շարք հաւատալիքներ զու գնթաց են մանկան աճեցողութեան: Երեխան ծնուելու օրից մինչեւ քառասուն օր ծննդկունին և նորածին երեխային սպառնում է երկու պատուհար, կամ ինչպէս գիւղացցիք առում են վատ «շորշով», աղջեցութիւն: Սրանցից մէկը «քառունքակութ» լինելն է, որ իրը առաջանում է հետեւեալ պատճառներից:

1. Եթէ այդ ժամանակիամիջոցում ծննդկանի սենեակը մի ուրիշ կին կամ տղամարդ, որ նոյնպէս քառասունքի մէջ է: Այս գէպքում աղջիկ երեխայ ունեցողի «քառասունքը» աղջում է տղայ ունեցողի վրայ և ընդհակառակն:

2. Եթէ մի նորապսակ տղայ կամ աղջիկ գեռ քառասունքը չլրացրած գնայ ծննդկանի մօտ:

3. Եթէ զրոխ հում միո են բերում ծննդկանի սենեակը:

և 4. Գրսից օրորոց են բերում ներս։ Հնարաւորութիւն կայ զգուշանալու այդ պատճառուներից։ Երբ քառոսունքակոխ անելու պատճառը դուրսն է, երեխային ևս հանում են դուրս և այնտեղից միասին են ներս մտնում պատճառի հետ։ Առհասարակ այդ փորձանքը շինութեան մէջն է պատճառում—իտի պատերի մէջ, առհասարակ շորշովը—խորհրդաւոր անբացատրելի ազգեցութիւնը բոլորովին բաց տեղում չի լինում։ Խոկ եթէ պատճառմամբ «քառասունքը» կոխում է, այն ժամանակ հետեւեալ միջոցների են դիմում։

1. Եթէ մի ուրիշ երեխայի ծնողից է առաջացել կամ նորապսակից, հիւանդ երեխային լողացնում են քառասունքակոխ անողի ոտների վերայ, կամ հիւանդացած երեխայի մայրը հիւանդացնողի (եթէ ազամարդ է) կնոջ հետ նստում են մէջը մէջքի տուած, փոխում են երեխաները և փոխադարձաբար ծիծ տուիս։

2. Եթէ մեկը թշնամաբար «քառասունքը թափել» է միւսի վրա, զգուշանում են թէ նա որտեղ է միզում, այնտեղի հողից ծածկաբար վերցնում են լուծում ջրի մէջ հիւանդ երեխային լողացնում են այդ ջրով, և կամ

3. Հիւանդ երեխայի շապիկը ծածուկ գիշերը գնում են նրա տան հերթիկի վրա թափ են տալիս դրանով քառասունքը յետ են դարձնում տիրոջը։ Սորա երեխան հիւանդանում է, իոկ առաջինը տպատռում է։

4. Եթէ մսից է եղել, այդ մսից մի կտոր լաւ եփում են և նրա ջրով լողացնում են հիւանդ երեխային։

5. Դթէ օրօրոցից է եղել, օրօրոցը այրում են և երեխային պահում են նրա միավորայ։ Խոկ եթէ այրել չի կարելի, մի կտոր շոր են կապում օրօրոցից և եօթն օր թաղնելուց յետոյ այդ շորը այրում են ու երեխան քնած ժամանակ այրազ շորը եօթն անդամ պատեցնում են օրօրոցի շորու կողմը առելով։ «Քու դեղ ու ճարն էս ըլի»։

Ծննդկանի վրայ աւելի աղդում է մկան, շան և կատուի քառասունքը մինոյն ձեռվ։ այսինքն ծննդից գեռ քառասուն օր չըրացը ած եթէ մի մուկ, շուն կամ կատու մտնի ծննդկանի ոհնեակը։ որա հետեւոնքը լինում է ոչ միայն ելեխայի հիւանդաննալը, այլ նաև նրա մայը եօթն ատը երեխաւ չի բերի եթէ ճար շանեն։ Այսպիսի հետեւանքներից ազատուելու համար գըտնում են շան գանդի ոսկորը, գնում են մազի մէջ, մազը գնում են հիւանդի գլխի վրայ (այս գէպը առ «քառասունքակոխ» լիս), քառասուն աման ջուր են լցնում գանդի վրա, ջուրը

մազի միջով թափւում է հիւանդի վրա, այդ միջոցին լցնողը իւրաքանչիւր ամանի հետ ասում է. «Ո՞ւ քառսունք որ քեզ կոխել է իս քո ճարը»:

«Քառասունքակոխ» լինելը արտայացաւում է այսպէս. երեխան հիւանդանում է, նիհարանում, ոտները իրենց ամրութիւնը կորցնում են, կերածը չի մարսում, «Ճերք» է ընկնում: Աթէ այս հիւանդութիւնը ամառն է պատահում, վերագրում են նաև շոգին: Երբ վերև յեշած միջոցները չեն գործադրում «ումից» և կամ «ինչից» քառսունքակոխ լինելը շստուգուելու պատճառով, այն ժամանակ երեխային և մօրը սժշկելու համար գիմում են հետեւեալ միջոցներին:

1. Հիւանդ երեխային կշռում են աթարի (տաւարի չորացած աղը) հետ երեք օր, օրը մի անգամ. եթէ երբորդ օրը երեխան աւելի կշռի քան աթարը, հաւատում են որ երեխան կառողջանայ, իսկ եթէ աթարը ծանրանայ, ընդհակառակը կը մեռնի:

2. Խօթն գերեզմանից հող են վերցնում, լուծում են ջրի մէջ և այդ ջրով լողացնում են հիւանդ երեխային:

3. Հիւանդ երեխային տառում են գերեզմանները, դնում են գերեզմանի վերայ և յետ են դառնում. եթէ երեխան լաց է լինում, հաւատում են որ կապրի, իսկ եթէ լուռ մնայ—կը մեռնի:

4. Երեխային դնում են սառը թոները և դրսից ձայն են տալիս եթէ երեխան այդ ձայնին լաց է լինում՝ հաւատում են, որ կապրի. իսկ եթէ լուռ է մնում—չի ապրի:

Սիւս հիւանդութիւնը, որ նոյն քառասնօրեայ ժամանակամիջոցին է վերաբերում «թըրզն» է: Այս հիւանդութեամբ բռնուած կանանց երեխանները չեն ապրում. մինչեւ երկրորդի ծնուիլը առաջինը մեռնում է. իւրաքանչ չեն չեն տեսնում: «Թըրզ» այսպէս է կոխում մէկին. քառասունքի մէջ ծննդկանի մօտ գնում է պատահմամբ մի «թըրզու» կին կամ այնպիսի մէկը որ թէն «թըրզ» չունի, բայց իւր մօտ թրզի ու լունք է պահում: Նատ անգամ էլ «թըրզու» կանայք զիտմամբ մտնում են ծննդկանի մօտ երբնաւ մեռակէ, որովհետեւ շրջապատողները թոյլ չեն տալ, չմօտենում են նորածին երեխային և ծածուկ՝ փէշը թափ են տալիս երեխայի վրայ երեք անգամ: Այսպիսով «թըրզ» թափում են երեխայի վերայ, որը կը մեռնի, իսկ իրենը աղատուում են: Այս հիւանդութիւնից ազատուելու համար հետեւեալ միջոցներին են գիմում:

1. Աշխատամէրը (մանկաբարձուհին) մղուառթիւնից մի

Երկու օր առաջ գուրս է տանում երխային և ծախում է առաջին պատահողին։ առնողը տանում է երեխային քաւորակնոջն է տալիս ասելով «առ քոնք, տուք իմը» և փոխարէնը մի ընծայ է ստանում։ Մկրտութեան օրը երեխային մկրտում են և յանձնում մօրը։

2. «Թբղոտ» կինը եօթն անգամ անց է կենում առաջին անգամ յզացած երինջի մէջքի վայով ասելով. «քոնք ինձ իմը քեզ», այդ գէպըում երինջի ձագերը չեն ապրում, իսկ կինը բժշկում է։

3. Նոյն նպատակով ճեղքում են վարդի թուփը, եօթն անգամ անց են կենում արանքով և ամեն անգամին առում են. «իմ վարդը քեզ քո վարդը ինձ»։ վարդի թուփը չարանում է, իսկ հիւանգ կինը «թբղոտ» աղատուում է։

4. Նոյն նպատակով «թբղոտ» կինը լողանում է «լիշք» ջրով «լիշք» ջուր ասելով հասկանում են մեծ պատի մէջ, քառուն մանկանց տօնի օրը մանկանց խեղդուելու լիճը ձևացնող ամսմի ջուրը, որի մէջ այդ օրը մանուկների փոխարէն վառում են մոմեր։ Երեկ «լիճք» խօսքն է, որ «լիշք» է դարձել։

5. Նոյն նպատակով վերցնում են տեսունընգառաջի նախատանին կարդացուող վերջին աւետարանի տռաջ բռնած մամի մի կտորը, հալեցնում են ջրի մէջ և այդ ջրով լողացնում «թբղոտ» կնոջը։

6. Երբ տեսնում են մի օձ գորտ բռնած քերանում՝ իրենց յայտնի «թբղոտ» կանանց անուններն են տալիս. որի անունը տալիս օձը գորտին բաց թողնի, կը նշանակի, այն գորտը այն կնոջ «թբղի» գեղն է։ Գորտը առաջիս են այն կնոջը և նա խընամքով պահում է նըան։

7. Երբեւ վերջին միջոց գրեացներին են դիմում և «քոյլամա» կոչուած գիրն են անունները տալիս։ Բոյլամա—հառակի երկարութեամբ Այս գէպըում երեխան ապրում է, բայց ճնողներից մէկն ու մէկը մեռնում է, որովհետեւ «թբղը» անցնում է նրանցից մէկի վրա։ Առհասարակ մեռնողը հայրն է լինում։ Երբ կառկածում են թէ մի կին կարող է թբղոտ լինել, և զուցեց բերտծ երեխան չապըի, հետեւեալ միջոցներին են դիմում։

1. Երբ կինը առաջին անգամ իմանում է որ ինքը յղացած է, իմացողները նըան խմացնում են իշխ մէզ և ուտացնում 10 հատ սկ չամիչ։ Երբ երեխան առաջին անգամ խաղում է՝ երկու կում իշխ մէզ և 15 հատ սկ չամիչ, երբ սկսուում է երկունքի ցաւերը՝ երեք կում իշխ մէզ և 20 հատ սկ չամիչ։ Ազատուելու բոպէին աշխատամէրը պատրաստ ունենում է նորածին իշխ ձագին շրջապատող թաղանթը վրան մանրացրած

տորոն շաղ տուած, ծնուող երեխային բարուրում են այդ թաղանթի մէջ և թողնում երեք օր:

2. Նոյն նպատակով իրեխայի ծննդից մի երկու օր առաջ երկու արշին կտաւ ուղարկում են ներկարարի մօտ, ներկել են տալիս երկունքի ժամանակ ամրացնում են այդ կտաւի վրայ եօթն չըանեցրած առեղ. փոռում են մի մազի վրա, իսկ մազի տակ գրած է արգէն մի բոլորավին ուե հաւ: Երբ ծնւում է երեխան, նրան բարուրում են այդ կտաւի մէջ և երեք օր թողնում: Հաւը մորթում են, թոքերը և քարճերը ուտացնում մօքը, իսկ մնացածը պատանում են թաղում իրու թէ երեխայի փոխարէն:

3. Նոյն նպատակով՝ ծնուած երեխայի մազերը չեն խուզում եօթն տարի. հագցնում են այդքան ժամանակ միայն սպիտակ շորեր: Եօթն տարին լրացած օրը եօթն տանից կտորներ են հաւաքում: Երեխային տանում են շրջակայ ուխտատեղիներից մէկը, մազերը խուզում են, մկրտում և աներից հաւաքած կտորները իրար հետ միացնելով շոր են կարում ու հագցնում: Այդպիսի երեխան կոչւում է «Թիլանչի», մուրող-հաւաքող: Շատերը հէնց այդ անունն էլ պահում են կեանքի մէջ որ կընառուելով դառնում է «Դելօ»:

4. Նոյն նպատակով երեխայի ծնուելուց անմիջապէս երեխայի ականջից մի փոքր կարում են և հացի մէջ փաթաթած տալիս են մօքը առանց յայտնելու թէ հացի մէջ ինչ կայ:

5. Կամ երեխայի ականջը ծակում են և շան մազ են անցկացնում:

6. Նոյն նպատակով փոխում են քաւոքը, ենթագրեյով, որ կարսղ է քաւոքից լինել մահը:

(Նարունակելի)